ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
պարոն Նարեկ Մկրտչյանին

ՀՀ քաղաքացի Մուշեղ Հովսեփյանից
[redacted]

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի՛ պարոն Մկրտչյան,

Համաձայն 2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին:

1. Össur ընկերության i-Limb ձեռքի պրոթեզներ գնելու նախաձեռնությունը քննարկվե՞լ է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում պետական կառավարման մարմնի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: Եթե այո, ապա խնդրում եմ նշել՝ արդյոք քննարկումներին մասնակցե՞լ են քաղաքական և հայեցողական պաշտոններ չզբաղեցնող պաշտոնատար անձինք՝ քաղաքացիական ծառայողներ: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:

2. Ձեր հրապարակումներում նշում եք՝ «եթե ճանաչում եք զինվորների, որոնք պատերազմի ընթացքում կորցրել են ձեռքերը, խնդրում եմ նրանց տվյալներն ուղարկել ինձ»:

1) Դեկտեմբերի 22-ի դրությամբ քանի՞ անձի անձնական տվյալներ են մշակվել Ձեր կողմից:

2) Դրանք ներառու՞մ են կենսաչափական անձնական տվյալներ (անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տեղեկություններ):

3) Դիմե՞լ եք ՀՀ առողջապահության նախարարությանը վերին վերջույթի ամպուտացիա ունեցող անձանց տվյալներ ստանալու նպատակով: Եթե այո, ապա ի՞նչ պատասխան եք ստացել նախարարությունից: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:

3. Որպես ՀՀ ԱԺ պատգամավոր ի՞նչ գործողություններ եք ձեռնարկել, որպեսզի ՀՀ կառավարությունը հնարավորինս շուտ ՀՀ Ազգային ժողով ներկայացնի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը տարաբնույթ պատճառներով հետաձգվում է մի քանի տարի:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում (5 օր՝ ներառյալ ոչ աշխատանքային օրերը):

Շնորհակալություն:

Մուշեղ Հովսեփյան
22.12.2020